ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

- **Գործուղված անձ**

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ՝ Գ. Գևորգյան

- **Երկիր/քաղաք/ ժամկետ**

Ավստրիա / Վիեննա / 26 - 27.11.2019 թ.

- **Նպատակը**

TransMonEE-ն ազգային վիճակագրական մարմինների (ԱՎՄ) վաղուց գոյություն ունեցող տարածաշրջանային, գործընկերային նախաձեռնություն է, որի նպատակն է բարձրացնել երեխաներին, այդ թվում՝ նրանց բարեկեցությանն առնչվող տվյալների որակը, մատչելիությունն և օգտագործումը, ինչպես որ դա անրագրված է մինչև 2030թ. Օրակարգի առաջնահերտություններում: TrancMonEE-ի տարածաշրջանային տեղեկատվական բազաները և կայքը երեխաների սոցիալ-տնտեսական խնդիրներին առնչվող մեծամաշտաբ տեղեկատվության հավաքագրման և տարածման օգտակար գործիքակազմը: Ամենամյա տարածաշրջանային հանդիպումները հանդիսանում են այն պլատֆորմը, որտեղ ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը, ԱՎՄ-ները և այլ շահառու գործընկերներ կարող են քննարկել և ուսումնասիրել երեխաներին առչվող տվյալները, որոնք հավաքվում կամ պետք է հավաքվեն ԱՎՄ-ների կողմից: Մինչև 2030թ.-ի Օրակարգի հիմնական նպատակը երկիր մոլորակի վրա մարդկանց անհավասարության վերացումն է: Ընդ որում նպատակին հասնելուն, ինչպես որ նշված է Ներառական տվյալների խարտիայում, խոչընդոտում են տվյալների և տեղեկատվության անհամապատասխանությունը, դրանց անճշտությունները կամ բացակայությունը, ինչպես նաև տվյալների օգտագործման ունակությունների և ֆինանսավորման բացակայությունը: Այս տարվա հանդիպման հիմնական շեշտադրումն ուղղված է տարիքի ու սեռի կարևորությանը և դրանց կիրառելիությանը՝ տարբեր տարիքային խմբերի երեխաների պահանջմունքների և խոցելիության որոշման գործում:

- **Քննարկված թեմաները**

Աշխատաժողովի ընթացքում քննարկվել են հետևյալ թեմաները.

1. Տվյալների հավաքագրում սեռային և տարիքային հատկանիշին համապատասխան.
2. Դեռահասության տարիքի որոշման հիմնական ցուցանիշները.
3. Երեխաների պաշտպանության հիմնական խնդիրները և դրանց մշտադիտարկումը Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներում.
4. Երեխաների նկատմամբ բռնության մեթոդաբանական պարզաբանումներ, այդ թվում դրա չափումը կանանց նկատմամբ բռնության հետազոտության միջոցով:

Աշխատաժողովի ընթացքում առանձնակի կարևորվեց դեռահասների վերաբերյալ տվյալների դեզագրեգացումը/համախմբումը, քանզի այդ տվյալները հաճախ նույնացվում կամ միավորվում են երիտասարդների առնչվող տեղեկատվության հետ: Այն դեպքում, երբ այդ տարիքային խմբի ցուցանիշների մի մասը շատ կարևոր են երեխայի իրավունքի իրացման, ինչպես

նաև սեռային հավասարության իրացման/ապահովման համար, ինչպես օրինակ՝ մանկական ամուսնությունները, սեռական բռնությունը և այլն:

- **Արդյունքները**

1. Քննարկվել և հաստատվել է երեխաների սեռի և տարիքի վիճակագրության վերաբերյալ ազգային ինքնագնահատման ընդհանուր հաշվետվությունը:

2. Կայուն զարգացման նպատակների ցուցանիշների միջգերատեսչական փորձագիտական խմբի կողմից ներկայացվել են երեխաների նկատմամբ բռնությանն առնչվող ցուցանիշների (ԿԶՆ 16.2.1, 16.2.3, 16.3.1 և 16.3.2) հաշվարկման մեթոդաբանական փոփոխությունները:

3. Քննարկվել են երեխաների պաշտպանությանն առնչվող ազգային տվյալները, այդ թվում այն ցուցանիշները, մոտեցումները և կիրառվող մեթոդները, որոնք ծառայում են երեխաների և անչափահասների բարեկեցության, սեռերի հավասարության և կանանց ու աղջիկների իրավական ապահովման մշտադիտարկման նպատակով: Հատուկ ուշադրություն է դարձվել ԿԶՆ 5.3.1՝ մանկական ամուսնություն, ցուցանիշին:

4. Համաձայնեցվել է ցուցանիշների այն համակազմը, որը ներառվելու է երեխաների պաշտպանության մշտադիտարկման ազգային համակարգում:

Հանդիպումը արժեքավոր էր երեխաների պաշտպանությանն առնչվող վիճակագրությանն թեմաների բազմազանությամբ, արդիականությամբ ու կարևորությամբ, նոր մարտահրավերների, երևույթի չափման նորարարական մեթոդների և աղբյուրների, վերջին զարգացումների մասին իրազեկվելու առումով՝ հաշվի առնելով ողջ աշխարհում երեխաների պաշտպանությանն առնչվող վիճակագրության արագ աճող պահանջարկը և հետաքրքրությունը:

Հանդիպումը հնարավորություն ընձեռեց ծանոթանալ մասնակից երկրների երեխաների պաշտպանությանն առնչվող վիճակագրության վերջին ձեռքբերումներին, դասեր քաղել տվյալների հավաքագրման, մշակման, օգտագործման և տարածման միմյանց փորձից, գիտելիքներ փոխանակել կիրառվող մեթոդների վերաբերյալ՝ նպատակ ունենալով բարելավել երեխաների պաշտպանության մասշտաբների, հատկությունների և ազդեցության չափումը:

Հանդիպման հիմնական առաքելություններից է նաև նպաստել երեխաների պաշտպանության վիճակագրության միջազգային համադրելիության մակարդակի բարձրացմանը:

- **Նշումներ**

Հանդիպմանը մասնակցում էին MONEE ծրագրի շրջանակում 22 անդամ - երկրների ազգային վիճակագրական ծառայությունների համակարգողները, այդ երկրների ՄԱԿ-ի Մանկական Հիմնադրամի, ինչպես նաև ՄԱԿ-ի Մանկական Հիմնադրամի ԱՊՀ և Արևելյան Եվրոպայի երկրների տարածաշրջանային գրասենյակի ներկայացուցիչները, երեխաների պաշտպանության բնագավառի փորձագետներ, գիտնականներ և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: Այցելության հետ կապված ծախսերը ֆինանսավորվել են ՄԱԿ-ի Մանկական Հիմնադրամի կողմից:

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ,
վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ Գ. Գևորգյան

Գրականության ցանկ

1. Հանդիպման ընթացքում ներկայացված նյութեր